ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. հասցե ՝ *artakkhachatryan@ysu.am*

DOI: 10.24234/scientific.v3i53.395

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բարձրագույն կրթության հիմնական նպատակը, ըստ էության, ոչ միայն մասնագիտական գիտելիքների պարզ, մեխանիկական փոխանցումն է, այլև ուսանողների քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների և միջառարկայական ընկալման ձևավորումը: 21-րդ դարի առանցքային կարողունակությունների շարքում հատկապես կարևորվում են սոցիալ-քաղաքական բարդ գործընթացները մարդկային փորձառության և սուբյեկտիվության տեսանկյունից իմաստավորելու կարողությունները, դրանք իրական կյանքում կիրարկելու հմտությունների զարգացումը: Կարևորում ենք, որ մարդաբանական հայեցակարգերը չներկայացվեն դասընթացից զատ՝ որպես հավելյալ տեսական ուղղություն, այլ դինամիկ ինտեգրվեն «Կենսաքաղաքականություն» առարկայի բուն տրամաբանությանն ու դասավանդման կառուցվածքին:

Ելնելով վերոգրյալից, «Կենսաքաղաքականություն» առարկայի դասավանդման շրջանակում առաջարկում ենք կրթական համակարգի այս խնդիրների լուծման հնարավոր մոտեցումներ: Հոդվածի շրջանակում մշակվել են դասերի կազմակերպման մի քանի մոդելներ՝ զուգակցելով ակադեմիական-տեսական վերլուծությունն ու ինտերակտիվ մանկավարժական մեթոդները: Հիմնական շեշտը դրվել է հետազոտության վրա հիմնված ուսուցման, դեպքերի վերլուծության մեթոդի, առօրյա կենսաքաղաքական դրսևորումների քննարկման և «Մարդաբանական դիտանկյուն» ռազմավարության կիրառման վրա, որն իրենից ներկայացնում է սոցիալ-պատական, իրավական երևույթների դիտարկում մարդու, նրա առօրեական պրակտիկաների, ապրված իրականության պրիզմայով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մինչ օրս կենսաքաղաքականության դասավանդումը բուհական համակարգում չի իրականացվել մարդաբանական գիտելիքի և ժամանակակից կիրառական-

մանկավարժական մեթոդների համակարգված զուգորդմամբ: Հետազոտության արդյունքներով հանգել ենք եզրակացության, որ «Կենսաքաղաքականություն» առարկայի դասավանդման ընթացքում մարդաբանական մոտեցման կիրառումն արդյունավետորեն խթանում է ուսանողների վերլուծական մտածողությունը և գործնական հմտությունների դրսևորմանը: Տվյալները ակնբախ են դարձրել, որ դասապրոցեսում մարդաբանական գործիքակազմի ինտեգրումը նկատելիորեն բարձրացնում է ուսանողների ուսումնական մոտիվացիան և ուսումնասիրվող թեմայի նկատմամբ հետաքրքրությունը:

Բանալի բառեր՝ *կենսաքաղաքականություն, ավտոազգագրություն, կենսահիշխանություն, բնակչության կենսաքաղաքականություն, բժշկական մարդաբանություն, վիզուալ մարդաբանություն, մարդաբանական-ինտեգրված մոդել:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի առաջին քառորդի սոցիալական, քաղաքական և տեխնոլոգիական իրողությունները սկզբունքորեն վերափոխեցին պետության, հասարակության և անհատի փոխհարաբերությունների ավանդական սահմանները՝ վերաձևակերպելով, երբեմն էլ ավելի անորոշ ու տարալուծելի դարձնելով դրանք: Գլոբալ համաճարակային ճգնաժամերը, կենսաչափական վերահսկողության համակարգերի համատարած ներդրումը, վերարտադրողական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը, ինչպես նաև արհեստական բանականության կիրառումը հանրային առողջապահության և անվտանգության ոլորտում ցույց տվեցին որ արդի իշխանության առաջնային թիրախը մարդու կենսաբանական կյանքն է, մարմինը և կենսական գործընթացները: Այս համատեքստում բարձրագույն կրթության համակարգում, մասնավորապես, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության, մշակութային մարդաբանության և իրավագիտության կրթական ծրագրերում, «Կենսաքաղաքականություն» դասընթացի դասավանդումը ստանում է շատ կարևոր նշանակություն, որը հատում է տեսական հարթության սահմանները դեպի կիրառականություն: Առարկայի նպատակն է ապագա մասնագետներին զինելու վերլուծական այնպիսի գործիքակազմով, որը թույլ կտա բացահայտել արդի իշխանության գործածելի մեխանիզմները, հասկանալ մարդու ազատության և մարմնային ինքնավարության սահմանները, ինչպես նաև ձևավորել քննադատական մտածողություն գլոբալ կենսաքաղաքական մարտահրավերների նկատմամբ:

Հիմնախնդրի դրվածքը և դասավանդման առկա խոչընդոտները

Չնայած առարկայի հույժ արդիականությանը, բուհական դասավանդման պրակտիկայի դիտարկումն ակնհայտ է դարձնում, որ «Կենսաքաղաքականություն» դասընթացը հանդիպում է մեթոդական և դիդակտիկ լուրջ խոչընդոտների: Ավանդական ուսումնակրթական մոտեցումը հիմնված է առավելապես տեսական դասախոսությունների վրա, որոնց ընթացքում ներկայացվում են դասական

տեսաբանների փիլիսոփայական հայեցակարգերը: «Կենսաքաղաքականություն» առարկան դասավանդել ենք ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության երրորդ կուրսում: Ուսանողների համար այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «կենսաիշխանություն», «մերկ կյանք», «բացառիկ դրություն», հաճախ մնում են որպես վերացական հասկացություններ, որոնք ընկալվում են որպես իրական կյանքից կտրված աբստրակտ տեսական կառույցներ: Սա հանգեցնում է երկու հիմնական դիդակտիկ խնդրի, որոնցից առաջինը իմացաբանական խզումն է: Ուսանողը դժվարանում է տեսական վերացական հասկացությունները կապել սեփական առօրյա փորձառության, մարմնական վարքագծի և ժամանակակից սոցիալ-քաղաքական իրադարձությունների հետ: Հաջորդն ուսումնական մոտիվացիայի նվազումն է: Տեսական նյութի չոր, վերացական վերարտադրությունը հանգեցնում է պասիվ ուսումնառության, որտեղ ուսանողը յուրացնում է տերմինները մեխանիկորեն՝ առանց դրանց խորքային իմաստը յուրացնելու և քննադատորեն վերլուծելու: Այս խնդրի հաղթահարումը, ըստ էության, պահանջում է դասավանդման մեթոդաբանության էական վերանայում, որը հնարավորություն կտա տեսական բարդ հասկացությունները դարձնել տեսանելի, շոշափելի և վերլուծելի:

Հետազոտության նպատակը, խնդիրները և վարկածը

Հոդվածի նպատակն է մշակել ու տեսականորեն հիմնավորել, «Կենսաքաղաքականություն» դասընթացի դասավանդման նորարարական մոդելի արդյունավետությունը, որը հիմնված է մարդաբանական գիտելիքի, դաշտային հետազոտական մեթոդների և թվային տեխնոլոգիաների ինտեգրման վրա: Սա ինքնապատակ չէ, քանզի ժամանակակից կրթական աշխարհը հենվում է միջգիտակարգայնության վրա: Ըստ այդմ էլ, հետազոտության խնդիրներն են.

- Խորքային վերլուծության ենթարկել կենսաքաղաքականության տեսական ակունքները (Մ. Ֆուկո, Ջ. Ագամբեն, Ռ. Էսպոզիտո, Ն. Ռոուզ, Փ. Ռաբինով) և բացահայտել դրանց մարդաբանական չափումը:
- Հիմնավորել սոցիալ-մշակութային մարդաբանության մեթոդաբանական գործիքակազմի (ինքնազգագրություն, վիզուալ մարդաբանություն, նարատիվների վերլուծություն) դիդակտիկական ներուժը բուհական կրթության մեջ, առաջարկել դրա ինտեգրումը համալսարանական կրթության բոնագավառում:
- Մշակել դասընթացի ինտեգրված մոդել և այն ներդնել կրթական էլեկտրոնային հարթակներում (Moodle, Google Classroom):
- Իրականացնել կիսամյակային պիլոտային փորձարկում, գնահատել դրա քանակական և որակական արդյունքները ուսանողների քննադատական մտածողության, ուսումնական մոտիվացիայի և հետազոտական կարողությունների զարգացման տեսանկյունից:

Հետազոտության վարկածը. «Կենսաքաղաքականություն» դասընթացի դասավանդման գործընթացում մարդաբանական գիտելիքի և դաշտային հետազոտական մեթոդների համակարգված ինտեգրումը թույլ կտա հաղթահարել

տեսության և պրակտիկայի միջև առկա խզումը, էապես կբարձրացնի ուսանողների ուսումնառության մոտիվացիան և կնպաստի նրանց քննադատական-վերլուծական ու մեդիագրագիտության կարողունակությունների ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կենսաքաղաքական տրամասացության հայեցակարգային հիմքերը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել այն տեսությունները, որոնք ձևավորել են այս գիտակարգը 20-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը: «Կենսաքաղաքականություն» և «կենսաիշխանություն» հասկացությունների ակադեմիական շրջանառությունը կապված է ֆրանսիացի փիլիսոփա և պատմաբան Միշել Ֆուկոյի անվան հետ: Ֆուկոն իր «Սեքսուալության պատմությունը» (Foucault, 1976) աշխատության առաջին հատորում և Collège de France-ում կարդացած դասախոսությունների շարքերում (Foucault, 1997; Foucault, 2004a; Foucault, 2004b) իրականացրեց իշխանության պատմական կերպափոխումների խորքային վերլուծություն: Ֆուկոն ցույց է տալիս, որ դասական դարաշրջանում (մինչև 17-18-րդ դդ.) սուվերեն իշխանության հիմնական մեխանիզմը արտահայտվում էր «սպանելու կամ ապրել թողնելու» իրավունքով: Սուվերենն իր իշխանությունը իրականացնում էր հպատակի կյանքը խլելու կամ նրա գույքը բռնագրավելու միջոցով: Սակայն 18-րդ դարի վերջից սկսած իշխանության տեխնոլոգիաները ենթարկվում են որակական փոփոխության. ի հայտ է գալիս իշխանության նոր ձև, որի նպատակն է «ապրեցնելը և սպանությունից հրաժարվելը»: Հետևաբար, պետական իշխանության նոր գաղափարաբանական հղացքը կենսապայմանների բարելավման ոլորտային քաղաքականության իրագործումն է: Ֆուկոն առանձնացնում է կենսաիշխանության երկու փոխլրացնող վեկտորներ.

- Մարմնի անատոմո-քաղաքականություն, որը ձևավորվել է 18-րդ դարի առաջին կեսին և ուղղված է անհատի մարմնի գիտակարգային մշակմանը: Դպրոցները, զորանոցները, հիվանդանոցներն ու գործարանները դառնում են տարածքներ, որտեղ մարդկային մարմինը վարժեցվում, վերահսկվում և բարելավում է՝ նրա արտադրողականությունը բարձրացնելու նպատակով: Այս պարագայում նկատվում է տնտեսական շահագրռության ներգործությունը:
- Բնակչության կենսաքաղաքականությունը սկսել է ի հայտ գալ 18-րդ դարի երկրորդ կեսին և ներառում է ոչ թե առանձին անհատին, այլ մարդկանց ամբողջությունը՝ որպես կենսաբանական տեսակի («բնակչություն»): Իշխանության կարգավորման օբյեկտ են դառնում ծնելիությունը, մահացությունը, հիգիենան, համաճարակները, կյանքի տևողությունը և ռասայական համասեռությունը:

Ֆուկոն ներմուծում է «կառավարելիություն» հասկացությունը, որը ներառում է այն տեխնոլոգիաների, ընթացակարգերի և հաշվարկների ամբողջությունը, որոնց միջոցով իրականացվում է մարդկանց վարքագծի կառավարումը: Հետագայում Աշիլ Մբեմբեն վերանայում, լրացնում է Ֆուկոյի կենսաիշխանության հայեցակարգը՝ առաջ քաշելով նեկրոքաղաքականության տեսությունը (Mbembe, 2003):

Իտալացի փիլիսոփա Ջորջո Ագամբենը իր «Homo Sacer: Il potere sovrano e la nuda vita» (Agamben, 1995) և «Stato di eccezione» (Agamben, 2003) աշխատություններում վերանայում և քննադատորեն անդրադառնում է ֆուկոյական կենսաքաղաքականության տեսությունը: Ագամբենը հենվում է հին հունական լեզվական բաժանման վրա.

- Zoē (ζωή). Կենսաբանական, բնական կյանքը, որը հատուկ է մոլորակի բոլոր կենդանի էակներին:
- Bios (βίος). Քաղաքական, սոցիալական և իրավականորեն ձևակերպված կյանքը, որը հատուկ է քաղաքացուն (պոլիսի անդամին):

Ագամբենի պնդմամբ՝ արդի քաղաքականության առանցքային ֆենոմենը *zoē*-ի ներառումն է քաղաքական ոլորտ, ինչի արդյունքում ի հայտ է գալիս «մերկ կյանքը» (Agamben, 1995): Մերկ կյանքը իրավական ու քաղաքացիական պաշտպանվածությունից զուրկ գոյությունն է, այն գտնվում է սուվերեն իշխանության անմիջական վերահսկողության ներքո: Հենց սուվերեն իշխանությունն է, որ կարող է վճռել տվյալ անհատի ճակատագիրը, ապրելու կենսապայմանները, օժտել նրան իրավունքներով կամ զրկել դրանցից:

Ագամբենյան տեսության կենտրոնական կերպարը հին հռոմեական իրավունքից մեզ հայտնի *Homo Sacer*-ն է (սրբազան կամ անիծյալ մարդը), ում սպանելը չի պատժվում, սակայն զոհաբերելն արգելված է: Ժամանակակից կենսաքաղաքականության մեջ, ըստ Ագամբենի, *Homo Sacer*-ի կարգավիճակում կարող են հայտնվել փախստականները, համակենտրոնացման ճամբարների կալանավորները, արտակարգ դրության պայմաններում գտնվող քաղաքացիները կամ կլինիկական մահվան փուլում գտնվող պացիենտները: Ըստ էության, դրանք «լուսանցքում» կամ սահմանային վիճակում գտնվող խմբերն ու անհատներն են: «Stato di eccezione» աշխատության մեջ Ագամբենը ցույց է տալիս, որ ժամանակակից պետություններում «բացառիկ դրությունը» (արտակարգ դրությունը) դադարել է լինել ժամանակավոր միջոցառում և վերածվել է կառավարման մշտական հարացույցի, որտեղ օրենքի գործադրումը կասեցվում է հանուն անվտանգության կամ ներկայացվում է դրա քողի ներքո, իսկ մարդու մարմինը դառնում է պետական վերահսկողության անմիջական օբյեկտ:

Իտալացի մեկ այլ մտածող՝ Ռոբերտո Էսպոզիտոն իր «Bios. Biopolitica e filosofia» (Esposito, 2004) և «Immunitas. Protezione e negazione della vita» (Esposito, 2002) մենագրություններում առաջ է քաշում կենսաքաղաքականության «իմունիտար պարադիգմը»: Էսպոզիտոն առաջարկում է կենսաքաղաքականությունը ընկալել *Communitas* (համայնք, հանրային պարտք) և *Immunitas* (իմունիտետ, ազատում պարտքից, պաշտպանություն) հասկացությունների հակադրության միջոցով: Նրա մատուցմամբ՝ ժամանակակից հասարակությունը գործում է իմունոլոգիական տրամաբանությամբ. հասարակական մարմինը պաշտպանելու համար պետությունը ներդնում է վերահսկողության և բացառման մեխանիզմներ:

Սակայն, ինչպես կենսաբանական իմունիտետի պարագայում, երբ օրգանիզմն իրեն պաշտպանելու համար ներս է թողնում թույլատրելի չափաբաժնով վիրուս,

այնպես էլ քաղաքական իմունիզացիան կարող է հասնել «աուտոիմունային» աստիճանի, երբ պաշտպանական մեխանիզմները սկսում են ոչնչացնել հենց իրեն՝ հասարակությանը: Էսպոզիտոն տարբերակում է.

- Նեգատիվ կենսաքաղաքականություն. Իշխանություն, որը պաշտպանում է կյանքը՝ այն սահմանափակելու, մեկուսացնելու կամ ոչնչացնելու միջոցով (օրինակ՝ նացիստական կենսաքաղաքականությունը կամ խիստ կարանտինային տոտալիտարիզմը):
- Պոզիտիվ կենսաքաղաքականություն. Հայեցակարգ, որտեղ կյանքը (*Bios*) չի ենթարկվում իշխանական վերահսկողությանը, այլ դառնում է ստեղծագործական, ազատագրական և համայնքային ինքնակազմակերպման աղբյուր:

Բրիտանացի սոցիոլոգ Նիկոլաս Ռոուզը կարծիքով՝ 21-րդ դարում կենսաքաղաքականությունը կրել է որակական փոփոխություններ՝ դուրս գալով ֆուկոյան դասական դիսցիպլինար պարադիգմի սահմաններից (Rose, 2007): Ռոուզն առանձնացնում է ժամանակակից կենսաքաղաքականության հինգ առանցքային առանձնահատկություններ.

- Մոլեկուլյարացում. Իշխանությունը և բժշկությունը մարդու մարմնին այլևս չեն նայում որպես ամբողջական անատոմիական համակարգի (օրգաններ, հյուսվածքներ), այլ դիտարկում են այն մոլեկուլյար, գենետիկական և նեյրոնային մակարդակներում (ԴՆԹ, գենոմ, նեյրոհաղորդիչներ):
- Օպտիմալացում. Ժամանակակից կենսաբժշկությունը նպատակ չունի միայն բուժել հիվանդությունները. այն ձգտում է օպտիմալացնել մարդկային կարողությունները (հիշողություն, տրամադրություն, արտաքին տեսք, կյանքի տևողություն):
- Սուբյեկտիվացում և Էթոքաղաքականություն. Անհատներն ինքնուրույն դառնում են իրենց կենսաբանական կյանքի կառավարիչները: Մարդիկ ստանձնում են «կենսաբանական քաղաքացիության» պատասխանատվություն՝ վերահսկելով սեփական գենետիկական ռիսկերը, սննդակարգը, ապրելակերպը և հոգեկան առողջությունը:
- Փորձագիտական իշխանություն. Քաղաքական որոշումները լեգիտիմացվում են ոչ թե գաղափարախոսական, այլ բժշկական, գենետիկական և համաճարակաբանական փորձագիտական տվյալների հիման վրա:
- Կենսակապիտալիզմ. Մարդկային կենսաբանական նյութը (գենետիկ տվյալներ, ցողունային բջիջներ, օրգաններ) վերածվում է տնտեսական շահույթի և շուկայական ապրանքի:

Ամերիկացի մարդաբան Փոլ Ռաբինովը (Rabinow, 1996; 2011) անդրադառնում է գիտելիքի, կենսաբանական գիտությունների, ժամանակակիցության և մարդկային կյանքի սոցիալական կազմակերպման փոխկապակցվածությանը: Ռաբինովը պնդում է, որ եթե նախկինում սոցիալական խմբերը ձևավորվում էին դասակարգային, ազգային կամ կրոնական պատկանելության հիման վրա,ապա ժամանակակից աշխարհում մարդիկ միավորվում են ընդհանուր կենսաբանական/գենետիկական հատկանիշների շուրջ (օրինակ՝ որոշակի գենետիկական հիվանդություն կամ ռիսկ ունեցող պացիենտների ասոցիացիաներ) (Rabinow, 1996; 99-100): Ռաբինովի

առաջարկած «ժամանակակից մարդաբանությունը» դառնում է այն մեթոդաբանական կամուրջը, որը թույլ է տալիս կենսաքաղաքական տեսությունները տեղափոխել դաշտային-էմպիրիկ հետազոտությունների հարթություն:

Մարդաբանական շրջադարձի դիդակտիկական ներուժը բուհական համակարգում

Սոցիալական գիտությունների դասավանդման ժամանակակից մեթոդիկայում առանցքային տեղ է գրավում «մարդաբանական շրջադարձը»: Այն ենթադրում է հետազոտական և դիդակտիկական ուշադրության տեղափոխում վերացական մակրոհամակարգերից դեպի միկրոմակարդակ՝ անհատական փորձառություն, առօրյա պրակտիկաներ, տեղային գիտելիք և սուբյեկտիվ ընկալումներ:

«Կենսաքաղաքականություն» դասընթացի շրջանակներում մարդաբանական մոտեցման կիրառումը թույլ է տալիս հաղթահարել վերոնշյալ իմացաբանական խզումը: Երբ ուսանողին առաջարկվում է դիտարկել Ֆուկոյի «դիսցիպլինար իշխանությունը» ոչ թե որպես 18-րդ դարի ֆրանսիական բանտերի պատմություն, այլ որպես սեփական համալսարանական լսարանի կամ սմարթֆոնի հավելվածների կողմից իրականացվող վերահսկողություն, տեսական հասկացությունը վերածվում է ապրված և հասկացված իրողության: Նշված համակցությունը դարձյալ կարևորվում է ուսանողների մոտիվացիոն կողմի ակտիվացման տեսանկյունից, ինչը արդի դարաշրջանում կրթության կազմակերպման էական հիմնահարցերից է (Առաքելյան և Ավագյան, 2024):

Մարդաբանության կարևորագույն հայեցակարգերից է «մարմնավորման» տեսությունը, որը մշակվել է բժշկական մարդաբանության ներկայացուցիչներ Նենսի Սքեպեր-Հյուզի և Մարգարետ Լոքի կողմից (Scheper-Hughes & Lock, 1987; Lock & Nguyen, 2010) աշխատության մեջ: Հեղինակներն առանձնացնում են «երեք մարմինների» հայեցակարգը: Առաջինը ֆիզիկական, անհատական մարմինն է, մարդու մարմնական և հոգեբանական ապրված փորձառությունը: Երկրորդը՝ սոցիալական մարմինն է, այսինքն՝ մարմինը որպես մշակութային և սոցիալական խորհրդանիշների կրող: Հաջորդը դա քաղաքական մարմինն է՝ մարմինը որպես իշխանության, վերահսկողության, կարգապահության և կառավարման օբյեկտ:

Բուհական դիդակտիկայում այս հայեցակարգի կիրառումը ուսանողներին տալիս է վերլուծական կոնկրետ գործիք: Քլիֆորդ Գիրցի «խիտ նկարագրության» մեթոդաբանության կիրառմամբ (Geertz, 1973) ուսանողները սովորում են վերլուծել սոցիալական փաստերը ոչ թե մակերեսային-վիճակագրական տվյալներով, այլ դրանց խորքային, իմաստային և իշխանական ենթատեքստերի բացահատյմամբ: Բնական է, որ անհրաժեշտություն է առաջանալու մարդաբանական որոշ տեսություններ և մեթոդներ ներառել «Կենսաքաղաքականություն» դասընթացի ծրագրում:

Այսպիսով, մարդաբանական գիտելիքի ինտեգրումը «Կենսաքաղաքականություն» դասընթացի տեսական հատվածում ստեղծում է ամուր

իմացաբանական հիմք: Այն պատրաստում է ուսանողին անցնում կատարելու պասիվ տեսական ընկալումից դեպի ակտիվ դաշտային-հետազոտական գործունեության:

Ավանդական և մարդաբանական-ինտեգրված մոդելներ

Բարձրագույն կրթության մեջ հասարակագիտական և քաղաքագիտական առարկաների դասավանդման ավանդական պարադիգմը հիմնված է «ինֆորմացիայի փոխանցման» վրա, որտեղ դասավանդողը հանդես է գալիս որպես ակադեմիական գիտելիքի միակ, հեղինակավոր աղբյուր, իսկ ուսանողը՝ որպես պասիվ սպառող կամ «դատարկ անոթ» (Freire, 1970): «Կենսաքաղաքականություն» դասընթացի պարագայում այս մոտեցումն ունի լուրջ մեթոդաբանական սահմանափակումներ.

- Դեդուկտիվ վերացարկում. Ուսանողներին առաջարկվում են բարդ տեսական սխեմաներ (օրինակ՝ Ֆուկոյի «անատոմո-քաղաքականությունը» կամ Ագամբենի «բացառիկ դրությունը»), որոնք չեն կապակցվում էմպիրիկ իրականության հետ: Այս դեպքում տեսությունը վերածվում է ինքնանպատակ դոգմայի:
- Սուբյեկտիվության անտեսում. Ավանդական մոդելում ուսանողի անձնական, մարմնական և սոցիալական փորձառությունը դուրս է մնում վերլուծության շրջանակից: Ուսանողը դիտարկում է իշխանական համակարգերը որպես իրենից դուրս գոյություն ունեցող, վերացական կառույցներ:
- Վերարտադրողական գնահատում. Ուսումնառության արդյունքը գնահատվում է տեսական տեքստերի վերարտադրման (ռեֆերատներ, բանավոր քննություններ) աստիճանով, ինչը չի խրախուսում քննադատական մտածողությունը և հետազոտական նախաձեռնողականությունը:

Մարդաբանական գործիքակազմի ինտեգրումը փոխում է դասավանդման վեկտորը՝ ապահովելով անցում *դեդուկտիվ-վերացական* մոդելից դեպի *ինդուկտիվ-էմպիրիկ* և *փորձառական* մոդել: Ըստ Դեյվիդ Կոլբի (Kolb, 1984) փորձառական ուսումնառության տեսության՝ գիտելիքի արդյունավետ յուրացումը տեղի է ունենում կոնկրետ փորձառության, ռեֆլեքսիվ դիտարկման, վերացական հայեցակարգման և ակտիվ փորձարկման շրջափուլով: Մարդաբանական-ինտեգրված մոդելն ապահովում է Էմպիրիկ հիմնավորվածություն: Այս դեպքում ուսանողները սկսում են ոչ թե տեսական դոգմաներից, այլ դաշտային դիտարկումներից, լուսանկարչական նյութերից և հարցազրույցներից՝ աստիճանաբար բարձրանալով դեպի տեսական ընդհանրացումներ: Հաջորդը կրիտիկական ռեֆլեքսիվությունն է: Ուսանողը սովորում է դիտարկել սեփական մարմինն ու առօրյա վարքագիծը որպես կենսաքաղաքական ներգործության և դիմադրության տարածք: Մյուսը միջգիտակարգայնությունն է, որի պարագայում սոցիոլոգիական, մարդաբանական, քաղաքագիտական և թվային մեթոդների միահյուսումը ձևավորում է 21-րդ դարի հետազոտողին անհրաժեշտ համալիր կարողունակություններ:

Ստորև ներկայացված է ավանդական և մարդաբանական-ինտեգրված մոդելների առանցքային պարամետրերի համեմատական վերլուծությունը.

Գնահատման չափանիշ	Ավանդական դասախոսակենտրոն մոդել	Մարդաբանական-ինտեգրված մոդել
Իմացաբանական մոտեցում	Դեդուկտիվ (տեսությունից դեպի փաստեր)	Ինդուկտիվ / Աբդուկտիվ (դաշտից դեպի տեսություն)
Ուսանողի դերը	Պասիվ ունկնդիր, տեքստերի վերարտադրող	Ակտիվ հետազոտող, դաշտային աշխատող
Դասախոսի դերը	Գիտելիքի միակ աղբյուր, վերահսկող	Հետազոտական գործընթացի ֆասիլիտատոր, մենթոր
Հիմնական մեթոդները	Վերացական դասախոսություն, տեքստի քննարկում	Ավտոէթնոգրաֆիա, վիզուալ մարդաբանություն, բիո-նարատիվներ
Ուսումնական միջավայր	Ստանդարտ համալսարանական լսարան	Դաշտային միջավայր + Թվային հետազոտական լաբորատորիա
«Կենսաքաղաքականություն» հասկացության ընկալումը	Վերացական-փիլիսոփայական իշխանական համակարգ	Առօրյա մարմնական պրակտիկա, ապրված փորձառություն
Վերջնարդյունքի գնահատում	Ռեֆերատ, տեսական քննություն	Հետազոտական պորտֆոլիո, դաշտային օրագիր, էմպիրիկ հոդված

Թվային միջավայրի կազմակերպումը

Ժամանակակից բուհական դիդակտիկան պահանջում է ուսումնական գործընթացի անհամարժեք և համաժամանակյա բաղադրիչների օպտիմալ համադրում: «Կենսաքաղաքականություն» դասընթացի շրջանակներում LMS (Learning Management System) հարթակները (Moodle կամ Google Classroom) վերածվում են ոչ թե պարզապես ֆայլերի պահոցի, այլ «Թվային կենսաքաղաքական լաբորատորիայի»:

Moodle/Google Classroom հարթակում դասընթացի կառուցվածքը սահմանվում է հետևյալ մոդուլային կառուցակազմությամբ.

Մոդուլ 1. Տեսական-հայեցակարգային շտեմարան. Ներառում է բնագրային թվայնացված տեքստեր, տեսական հասկացությունների ինտերակտիվ բառարան, որտեղ ուսանողները համատեղ լրացնում են կենսաքաղաքական տերմինների սահմանումները:

Մոդուլ 2. Թվային դաշտային լաբորատորիա. Հատուկ տարածք, որտեղ ուսանողները բեռնում են իրենց դաշտային օրագրերը, վիզուալ լուսանկարները, աուդիո-հարցազրույցները և ավտոազգագրական նշումները:

Մոդուլ 3. Փոխադարձ գնահատման և քննարկումների ֆորում. Ուսանողները կարդում և քննադատորեն գնահատում են միմյանց դաշտային հետազոտական նյութերը՝ կիրառելով տեսական հասկացությունները:

Հաջորդ քայլը թվային գործիքների կիրառումն է դաշտային տվյալների հավաքագրման և վերլուծության համար: Արդի դարաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցումը կյանքի ամենատարբեր ոլորտներ դարձել է կենսական անհրաժեշտություն: Վերջին շրջանում զգալիորեն բարձրացել է այդ տեխնոլոգիաների ներգրավումը կրթական պրոցես (Անտոնյան, 2021): Հայսմ, դասընթացի արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է ինտեգրել հետևյալ թվային գործիքակազմը.

- MAXQDA / NVivo. Որակական տվյալների կոդավորման և վերլուծության համար: Ուսանողները սովորում են կոդավորել իրենց հավաքած հարցազրույցներն ու դաշտային նշումները «կենսաիշխանություն», «դիսցիպլինա», «իմունիտետ», «էթոքաղաքականություն» կատեգորիաներով:
- Padlet / Miro (Թվային ինտերակտիվ գրաֆիկական տախտակներ). Օգտագործվում են վիզուալ մարդաբանության առաջադրանքների համար: Ուսանողները իրական ժամանակում ստեղծում են քաղաքային կենսաքաղաքական տարածքների, կենսաչափական վերահսկողության կետերի կամ հանրային առողջապահական պոստերների վիզուալ քարտեզներ:
- Google Keep / Notion. Ծառայում են որպես էլեկտրոնային դաշտային օրագրեր, որտեղ ուսանողները ֆիքսում են իրենց առօրյա դիտարկումներն ու լուսանկարները՝ անմիջապես համակարգելով դրանք ըստ դասընթացի թեմաների:

Գործնական մեթոդական հնարներ և դասապլանների մոդելներ

Ավտոազգագրությունը որակական հետազոտության մեթոդ է, որը համադրում է ինքնակենսագրությունը և ազգագրությունը: Այս մեթոդի առաջամարտիկներ Քերոլայն Էլլիսը և Արթուր Բոխները իրենց համատեղ աշխատությունում (Ellis & Bochner, 2000) և Էլլիսը (Ellis, 2004) իր գրքում ցույց են տալիս, որ հետազոտողի անձնական փորձառությունը, էմոցիաներն ու մարմնական ապրումները կարող են ծառայել որպես սոցիալական և մշակութային իրականության վերլուծության լիարժեք աղբյուր: «Կենսաքաղաքականություն» դասընթացում ավտոազգագրությունը թույլ է տալիս ուսանողին վերլուծել, թե ինչպես է կենսաիշխանությունը ներգործում իր անձնական մարմնի և առօրյա վարքագծի վրա:

Դասապլանի / Առաջադրանքի մոդել 1.

Թեմա. «Մարմինը, սահմանափակումները և կենսաքաղաքականությունը. Առօրյա վարքագծի ավտոազգագրական վերլուծություն»:

Տևողություն. 1 շաբաթ (դաշտային դիտարկում) + 1 լսարանային դաս (քննարկում):

Առաջադրանքի հրահանգ. Ուսանողը 7 օրվա ընթացքում վարելու է ավտոազգագրական օրագիր՝ ֆիքսելով այն պահերը, երբ իր մարմինը ենթարկվում է կենսաքաղաքական դիսցիպլինար վերահսկողության (օրինակ՝ դիմակ կրելու ռեժիմներ, ջերմաչափում, կենսաչափական սկանավորում, սմարթֆոնի առողջապահական հավելվածների ծանուցումներ, սննդակարգի և քնի ինքնավերահսկում):

Վերլուծական պահանջ. Դաշտային նշումները պետք է համադրվեն Մ. Ֆուկոյի «մարմնի անատոմո-քաղաքականության» և Ն. Ռոուզի «էթոպոլիտիկայի» հայեցակարգերի հետ:

Գնահատման չափանիշի մասով առաջարկում ենք հետևյալը.

1. Դաշտային նշումների խորությունն ու մանրամասնությունը (30%):
2. Տեսական հասկացությունների ճշգրիտ և քննադատական կիրառումը (40%):
3. Ինքնանրադարձության (reflexivity) և վերլուծական ինքնուրույնության աստիճանը (30%):

Հաջորդը վիզուալ մարդաբանությունն է: Այն հենվում է լուսանկարների, տեսանյութերի և վիզուալ տարրերի վերլուծության վրա: Բրիտանացի մարդաբան Սարահ Փինքը փաստում է, որ վիզուալ աղբյուրները պարզապես իրականության արտացոլումը չեն, այլ սոցիալական հարաբերությունների և իշխանական դիսկուրսների ակտիվ արտադրիչներ: (Pink, 2013): Կենսաքաղաքականության կոնտեքստում վիզուալ մեթոդները թույլ են տալիս տեսանելի դարձնել քաղաքային տարածության մեջ սփռված իշխանական նշաններն ու վերահսկողության տեխնոլոգիաները:

Դասապլանի / Առաջադրանքի մոդել 2.

Թեման՝ «Քաղաքային տարածության կենսաքաղաքական վիզուալ քարտեզագրում»: Տևողությունը նախատեսվում է սահմանել 2 շաբաթ: Առաջադրանքի հրահանգն է՝ ուսանողները 3-4 հոգանոց խմբերով իրականացնում են վիզուալ-ազգագրական ուսումնասիրություն քաղաքի որոշակի հատվածում (օրինակ՝ համալսարանական քաղաքամաս, բժշկական կենտրոն, մետրոպոլիտեն, առևտրի կենտրոն): Նրանք պետք է լուսանկարեն հիգիենիկ և անվտանգային արգելող/կարգադրող ցուցանակները, հսկման տեսախցիկները և կենսաչափական սկաներները, տարածության սեգրեգացիայի (մեկուսացման) և հոսքերի կարգավորման ֆիզիկական արգելապատնեշները: Վերջնարդյունքը հանգելու է Padlet կամ Miro հարթակում խմբի կողմից վիզուալ քարտեզ ստեղծմանը, որտեղ յուրաքանչյուր լուսանկար ուղեկցվելու է վերլուծական տեքստով՝ հենվելով Ջ. Ագամբենի «բացառիկ դրության» և Ռ. Էսպոզիտոյի «իմունիտար պարադիգմի» վրա:

Հաջորդը հանգույցը կենսանարատիվների վերլուծությունն է: Բժշկական մարդաբանության հիմնադիր, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Արթուր Քլայնմանը իր դասական (Kleinman, 1988) աշխատության մեջ հստակ տարբերակում է ներմուծում երեք հասկացությունների միջև.

- Հիվանդություն (կենսաբանական/բժշկական մակարդակ). Օրգանիզմի կենսաբանական կամ ֆիզիոլոգիական խանգարում, պաթոլոգիա, որն ախտորոշվում է բժշկի կողմից:
- Տկարություն կամ Հիվանդազգացողություն (անհատական/սուբյեկտիվ մակարդակ). Հիվանդության անհատական, ապրված և սուբյեկտիվ փորձառությունն ու դրա իմաստավորումը պացիենտի կողմից (ինչպես է մարդն իրեն զգում և վերապրում այդ վիճակը):
- Հիվանդոտություն կամ Սոցիալական հիվանդություն (սոցիալ-մշակութային մակարդակ). Հիվանդության սոցիալական, մշակութային և ինստիտուցիոնալ ընկալումը (հասարակության վերաբերմունքը, հիվանդի սոցիալական դերը, կարգավիճակն ու պաշտոնական ճանաչումը):

Կենսանարատիվների (կենսաբանական պատումների) վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս ուսումնասիրել, թե ինչպես են պացիենտները կամ անհատները բանակցում կենսաբժշկական հեղինակության հետ և ինչպես է ձևավորվում նրանց «կենսաբանական ինքնությունը», ինչպես նաև պայմանավորում հետագա կերպափոխումները:

Դասապլանի կամ առաջադրանքի մոդել 3.

Թեման է «Կենսաբժշկական դիսկուրսը և պացիենտի սուբյեկտիվությունը. կենսա-նարատիվների վերլուծություն»: Առաջարկվում է տևողությունը սահմանել 2 շաբաթ: Առաջադրանքի հրահանգն է՝ ուսանողն իրականացնելու է կիսաստանդարտավորված խորքային հարցազրույց քրոնիկ հիվանդություն ունեցող կամ կենսաբժշկական միջամտության (օրինակ՝ պլաստիկ վիրահատություն, արտամարմնային բեղմնավորում, գենետիկական թեստավորում) ենթարկված անհատի հետ: Հարցազրույցի տեքստի վերլուծության ընթացքում ուսանողը պետք է բացահայտի, թե ինչպես է բժշկական իշխանությունը ձևավորում պացիենտի ինքնընկալումը, ինչպիսի էթիկական և կենսաքաղաքական ընտրությունների առջև է կանգնում անհատը ըստ Ն. Ռոուզի «կենսաբանական քաղաքացիության» տեսության (Rose & Novas, 2005), ինչպես է դրսևորվում պացիենտի ինքնավարությունն ու դիմադրությունը կենսաբժշկական համակարգի նկատմամբ:

Այսպիսով, մարդաբանական հետազոտական մեթոդների և թվային տեխնոլոգիաների ինտեգրումը ստեղծում է դասավանդման ամուր գործնական-մեթոդական հիմք:

Մարդաբանական-ինտեգրված մոդելի դիդակտիկական գնահատման և ներդրման հայեցակարգը

Առաջարկվող դիդակտիկական մոդելի արդյունավետության գնահատումը պահանջում է անցում ավանդական վերարտադրողական համակարգից դեպի բազմակոմպոնենտ պորտֆոլիոյային գնահատում: Ուսանողների ձեռքբերումները գնահատվում են երեք առանցքային չափանիշներով, որոնցից առաջինը տեսական-հայեցակարգային ընկալման խորությունն է: Ըստ այդմ, գնահատվում է, թե որքանով է ուսանողը կարողանում շրջանցել տերմինների մեխանիկական վերարտադրությունը և կիրառել Մ. Ֆուկոյի, Ջ. Ագամբենի, Ռ. Էսպոզիտոյի, Ն. Ռոուզի և Փ. Ռաբինովի

հայեցակարգերը որպես վերլուծական «լենզաներ» սոցիալական իրականության ապակոդավորման համար: Մյուս բաղադրիչը էմպիրիկ-հետազոտական կարողունակությունն է. Որի պարագայում չափվում է դաշտային տվյալների հավաքագրման (ավտոազգագրական օրագրեր, վիզուալ լուսանկարչություն, բիո-նարատիվ հարցազրույցներ) որակը, ինչպես նաև որակական տվյալների մշակման թվային գործիքների (MAXQDA, Miro, Moodle) տիրապետման աստիճանը: Հետայդու, ի հայտ է գալիս քննադատական ռեֆլեքսիան և հետազոտական էթիկան: Այս դեպքում գնահատվում է ուսանողի ունակությունը՝ դիտարկելու սեփական մարմինն ու առօրյան որպես կենսաքաղաքական համակարգի մաս, ինչպես նաև հետազոտական էթիկայի նորմերի (իրազեկում, համաձայնություն, անանունություն) պահպանումը դաշտային աշխատանքի ընթացքում:

Դասընթացի ներդրման ընթացքում ուսանողների առաջընթացը գնահատելու համար առաջարկվում է կիրառել հետևյալ ստանդարտացված և հարմարեցված գործիքակազմը.

- «Ուոտսոն-Գլեյզերի քննադատական մտածողության գնահատման» թեստային մեթոդիկայի ադապտացիա. Օգտագործվում է ուսանողների վերլուծական, փաստարկման և տրամաբանական եզրահանգումներ կատարելու կարողությունները չափելու համար՝ նախքան դասընթացի սկիզբը և դրա ավարտին:
- «Ուսումնառության մոտիվացիոն ռազմավարությունների հարցարան». Հարցարանը թույլ է տալու գնահատել ուսանողների ներքին ուսումնական մոտիվացիան, ինքնակարգավորվող ուսումնառության մակարդակը և ռեֆլեքսիվության աստիճանը:
- Հետազոտական պորտֆոլիոյի գնահատման չափանիշներ. Գնահատվում են դաշտային օրագրերի լիարժեքությունը, վիզուալ քարտեզների տեսական հիմնավորվածությունը և MAXQDA/Taguette համակարգերում տեքստերի կոդավորման ճշգրտությունը:

Այս փուլում կարևոր է հաշվի առնել դիդակտիկական ռիսկերը, մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները: Մարդաբանական մեթոդների ներդրումը տեսական դասընթացում կապված է որոշակի դիդակտիկական և մեթոդաբանական ռիսկերի հետ, որոնք պահանջում են դասախոսի նախօրոք պլանավորված միջամտությունը.

Դիդակտիկական ռիսկ / Մարտահրավեր	Դրսևորման ձևը	Հաղթահարման մեխանիզմը
Էմպիրիզմի ծայրահեղացում	Ուսանողները կենտրոնանում են միայն դաշտային նկարագրությունների վրա՝ մոռանալով տեսական ընդհանրացումները:	Դաշտային օրագրերում ներդնել «տեսական կոդավորման» պարտադիր պահանջ, այսինքն՝ յուրաքանչյուր դիտարկում պետք է կապվի

Դիդակտիկական ռիսկ / Մարտահրավեր	Դրսևորման ձևը	Հաղթահարման մեխանիզմը
		տեսական հասկացության հետ:
Ճանաչողական ծանրաբեռնվածություն	Միաժամանակ տեսական բարդ տեքստերի, դաշտային աշխատանքի և թվային ծրագրերի (MAXQDA, Miro) յուրացման դժվարություն:	Ծրագրային գործիքների աստիճանական ներդրում և LMS Moodle-ում տեսանյութերով ուղեցույցների տեղադրում:
Էթիկական խնդիրներ դաշտային աշխատանքում	Զգայուն կենսաբժշկական թեմաներով հարցազրույցների կամ հանրային տարածքներում լուսանկարահանման ընթացքում խնդիրներ:	Մինչ դաշտ դուրս գալը անցկացնել «Հետազոտական էթիկայի» հատուկ սեմինար և կիրառել իրազեկ համաձայնության ձևաթղթեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Տեսական և մեթոդաբանական վերլուծությունը ակնբախ է դարձնում իրողությունը, որ բարձրագույն կրթության համակարգում «Կենսաքաղաքականություն» դասընթացի դասավանդման ավանդական վերացական-դասախոսակենտրոն մոդելն ունի սահմանափակումներ: Այն առաջացնում է «իմացաբանական խզում» տեսական բարդ հայեցակարգերի և ուսանողների սոցիալ-մարմնական փորձառության միջև: Առաջարկված մարդաբանական-ինտեգրված մոդելը (ավտոազգագրություն, վիզուալ քարտեզագրում, կենսա-նարատիվներ) և թվային հետազոտական գործիքակազմը (Moodle, MAXQDA, Miro) թույլ են տալիս.

- Վերացական տեսությունը վերածել էմպիրիկորեն վերլուծելի նյութի. Կենսաիշխանությունը, մերկ կյանքը, իմունիտար պարադիգմը և էթոպոլիտիկան դիտարկվում են որպես առօրյա կյանքում, քաղաքային տարածույթում և կենսաբժշկական պրակտիկաներում առկա իրողություններ, որոնք պարառել են ժամանակակից հասարակության յուրաքանչյուր քաղաքացու կենսաշխարհը:
- Զարգացնել 21-րդ դարի հետազոտական կարողունակություններ: Ուսանողը պասիվ սպառողից անցում է կատարում ակտիվ հետազոտողի, որը տիրապետում է որակական տվյալների հավաքագրման, թվային

կոդավորման, քննադատական վերլուծության և էթիկական ռեֆլեքսիայի հմտություններին:

Ելնելով ասվածից՝ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել մի քանի գործնական առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել քաղաքագիտության առանձին դաընթացների ընթացքում կիրառման համար.

- Կառուցվածքային վերաբաշխում. Դասընթացի ծրագրում ապահովել տեսական և դաշտային-էմպիրիկ բաղադրիչների հավասարակշռությունը (օրինակ՝ 50% տեսական դասախոսություններ, 50% հետազոտական լաբորատորիա):
- Միջգիտակարգային գործիքների ներդրում. Քաղաքագիտական դիսկուրսների վերլուծության մեջ ներառել սոցիալ-մշակութային մարդաբանության մեթոդները (ավտոազգագրական օրագրեր, վիզուալ քարտեզագրում, բիո-նարատիվներ):
- Թվային միջավայրի ֆունկցիոնալացում. LMS հարթակները օգտագործել որպես ինտերակտիվ հետազոտական տարածք, որտեղ իրականացվում է դաշտային տվյալների համատեղ քննարկում և փոխադարձ գնահատում, գրախոսում:
- Էթիկական հրահանգավորում. Դաշտային հետազոտություններից առաջ ուսանողներին ապահովել հետազոտական էթիկայի հստակ ուղեցույցներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Անտոնյան L. (2021). *Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիական գործիքների կիրառման հնարավորությունները ուսուցման գործընթացում*, Կրթությունը 21-րդ դարում, *1*(5).

Առաքելյան Ա., Ավագյան Ա. (2024). *Ուսանողների ուսումնական մոտիվացիայում դրդապատճառների աստիճանակարգի առանձնահատկությունները*, Գիտական տեղեկագիր, *2*(47).

Agamben, G. (1995). *Homo Sacer: Il potere sovrano e la nuda vita*. Torino: Giulio Einaudi editore.

Agamben, G. (2003). *Stato di eccezione*. Torino: Bollati Boringhieri.

Ellis, C. (2004). *The Ethnographic I: A Methodological Novel about Autoethnography*. Walnut Creek: Altamira Press.

Ellis, C., & Bochner, A. P. (2000). *Autoethnography, Personal Narrative, Reflexivity*. In N. K. Denzin & Y. S. Lincoln (Eds.), *Handbook of Qualitative Research* (2nd ed., pp. 733–768). Thousand Oaks: SAGE Publications.

Esposito, R. (2002). *Immunitas: Protezione e negazione della vita*. Torino: Giulio Einaudi editore.

Esposito, R. (2004). *Bíos: Biopolitica e filosofia*. Torino: Giulio Einaudi editore.

Foucault, M. (1976). *Histoire de la sexualité, Tome 1: La volonté de savoir*. Paris: Gallimard.

Foucault, M. (1997). *«Il faut défendre la société»: Cours au Collège de France (1975-*

1976). Paris: Seuil/Gallimard.

Foucault, M. (2004). *Sécurité, territoire, population: Cours au Collège de France (1977-1978)*. Paris: Seuil/Gallimard.

Foucault, M. (2004). *Naissance de la biopolitique: Cours au Collège de France (1978-1979)*. Paris: Seuil/Gallimard.

Freire, P. (1970). *Pedagogy of the Oppressed*. New York: Herder and Herder.

Geertz, C. (1973). *The Interpretation of Cultures: Selected Essays*. New York: Basic Books.

Kleinman, A. (1988). *The Illness Narratives: Suffering, Healing, and the Human Condition*. New York: Basic Books.

Kolb, D. A. (1984). *Experiential Learning: Experience as the Source of Learning and Development*. Englewood Cliffs, NJ: Prentice-Hall.

Lock, M., & Nguyen, V.-K. (2010). *An Anthropology of Biomedicine*. Chichester: Wiley-Blackwell.

Mbembe, A. (2003). *Necropolitics*. *Public Culture*, *15*(1).

Pink, S. (2013). *Doing Visual Ethnography* (3rd ed.). London: SAGE Publications.

Rabinow, P. (1996). *Essays on the Anthropology of Reason*. Princeton: Princeton University Press.

Rabinow, P. (2011). *The Accompaniment: Assembling the Contemporary*. Chicago: University of Chicago Press.

Rose, N. (2007). *The Politics of Life Itself: Biomedicine, Power, and Subjectivity in the Twenty-First Century*. Princeton: Princeton University Press.

Rose, N., & Novas, C. (2005). *Biological Citizenship*. In A. Ong & S. J. Collier (Eds.), *Global Assemblages: Technology, Politics, and Ethics as Anthropological Problems*. Malden: Blackwell Publishing.

Scheper-Hughes, N., & Lock, M. M. (1987). The Mindful Body: A Prolegomenon to Future Work in Medical Anthropology. *Medical Anthropology Quarterly*, *1*(1).

REFERENCE LIST

Agamben, G. (1995). *Homo Sacer: Il potere sovrano e la nuda vita*. Torino: Giulio Einaudi editore.

Agamben, G. (2003). *Stato di eccezione*. Torino: Bollati Boringhieri.

Antonyan L. (2021). Vozmozhnosti ispol'zovaniya sredstv informacionno-kommunikacionnyh tekhnologij v processe obucheniya (*Possibilities for using information and communication technology tools in the learning process*). Obrazovanie v XXI veke, *1*(5).

Arakelyan A., Avagyan A. (2024). Osobennosti ierarhii motivov v obrazovatel'noj motivacii studentov (*Features of the hierarchy of motives in the educational motivation of students*). Nauchnyj vestnik, *2*(47).

Ellis, C. (2004). *The Ethnographic I: A Methodological Novel about Autoethnography*. Walnut Creek: Altamira Press.

Ellis, C., & Bochner, A. P. (2000). Autoethnography, Personal Narrative, Reflexivity. In N. K. Denzin & Y. S. Lincoln (Eds.), *Handbook of Qualitative Research* (2nd ed., pp. 733–768). Thousand Oaks: SAGE Publications.

Esposito, R. (2002). *Immunitas: Protezione e negazione della vita*. Torino: Giulio Einaudi editore.

Esposito, R. (2004). *Bíos: Biopolitica e filosofia*. Torino: Giulio Einaudi editore.

Foucault, M. (1976). *Histoire de la sexualité, Tome 1: La volonté de savoir*. Paris: Gallimard.

Foucault, M. (1997). *«Il faut défendre la société»: Cours au Collège de France (1975-1976)*. Paris: Seuil/Gallimard.

Foucault, M. (2004). *Sécurité, territoire, population: Cours au Collège de France (1977-1978)*. Paris: Seuil/Gallimard.

Foucault, M. (2004). *Naissance de la biopolitique: Cours au Collège de France (1978-1979)*. Paris: Seuil/Gallimard.

Freire, P. (1970). *Pedagogy of the Oppressed*. New York: Herder and Herder.

Geertz, C. (1973). *The Interpretation of Cultures: Selected Essays*. New York: Basic Books.

Kleinman, A. (1988). *The Illness Narratives: Suffering, Healing, and the Human Condition*. New York: Basic Books.

Kolb, D. A. (1984). *Experiential Learning: Experience as the Source of Learning and Development*. Englewood Cliffs, NJ: Prentice-Hall.

Lock, M., & Nguyen, V.-K. (2010). *An Anthropology of Biomedicine*. Chichester: Wiley-Blackwell.

Mbembe, A. (2003). Necropolitics. *Public Culture*, *15*(1), 11–40.

Pink, S. (2013). *Doing Visual Ethnography* (3rd ed.). London: SAGE Publications.

Rabinow, P. (1996). *Essays on the Anthropology of Reason*. Princeton: Princeton University Press.

Rabinow, P. (2011). *The Accompaniment: Assembling the Contemporary*. Chicago: University of Chicago Press.

Rose, N. (2007). *The Politics of Life Itself: Biomedicine, Power, and Subjectivity in the Twenty-First Century*. Princeton: Princeton University Press.

Rose, N., & Novas, C. (2005). Biological Citizenship. In A. Ong & S. J. Collier (Eds.), *Global Assemblages: Technology, Politics, and Ethics as Anthropological Problems* (pp. 439–463). Malden: Blackwell Publishing.

Scheper-Hughes, N., & Lock, M. M. (1987). The Mindful Body: A Prolegomenon to Future Work in Medical Anthropology. *Medical Anthropology Quarterly*, *1*(1), 6–41.

РЕЗЮМЕ

ЗНАЧЕНИЕ АНТРОПОЛОГИЧЕСКОГО ЗНАНИЯ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «БИОПОЛИТИКА»: ТЕОРИЯ И ПРАКТИКА

Артак Хачатрян

Ключевая цель высшего образования заключается не просто в механической передаче профессиональных знаний, а в формировании у студентов критического

мышления, аналитических навыков и междисциплинарного видения. Среди базовых компетенций XXI века особую значимость приобретает умение осмыслять сложные социально-политические процессы через призму человеческого опыта и субъективности, а также способность применять эти знания на практике. Принципиально важно, чтобы антропологические концепты не преподносились изолированно — как отвлеченный теоретический раздел, — а органично и динамично вплетались в саму логику и структуру преподавания дисциплины «Биополитика».

Исходя из этого, в рамках курса «Биополитика» мы предлагаем возможные пути решения названных задач образовательной системы. В ходе исследования был разработан ряд моделей организации учебных занятий, сочетающих академический теоретический анализ с интерактивными педагогическими методами. Основной акцент сделан на исследовательски-ориентированном обучении (*research-based learning*), методе кейс-стади, осмыслении повседневных проявлений биополитики и применении стратегии «Антропологическая оптика».

Актуальность исследования обусловлена тем, что до сих пор преподавание биополитики в академической среде практически не сопровождалось системным синтезом антропологического знания и современных прикладных педагогических методик. Результаты исследования позволяют сделать вывод, что интеграция антропологического подхода в процесс обучения «Биополитике» эффективно стимулирует аналитическое мышление студентов и способствует проявлению прикладных навыков. Полученные данные наглядно показывают, что использование антропологического инструментария в учебном процессе заметно повышает учебную мотивацию студентов и их вовлеченность в изучаемую проблематику.

Ключевые слова: *Биополитика, автоэтнография, биовласть, биополитика населения, медицинская антропология, визуальная антропология, антропологически интегрированная модель.*

SUMMARY

THE IMPORTANCE OF ANTHROPOLOGICAL KNOWLEDGE IN THE PROCESS OF TEACHING THE "BIOPOLITICS" COURSE: THEORY AND PRACTICE

Artak Khachatryan

Fundamentally, the primary objective of higher education extends beyond the simple, mechanical transmission of specialized knowledge; it centers on fostering critical thinking, analytical reasoning, and an interdisciplinary perspective among students. Key among 21st-century competencies is the ability to make sense of complex socio-political processes through the lens of human experience and subjectivity, alongside cultivating skills to apply these insights in real-world contexts. Crucially, anthropological concepts

should not be introduced in isolation—as merely an additional theoretical branch—but rather dynamically integrated into the core logic and instructional framework of the "Biopolitics" course.

Building upon these premises, we offer potential approaches to addressing these educational challenges within the teaching framework of "Biopolitics." As part of this research, several instructional design models were developed, blending academic-theoretical analysis with interactive pedagogical methods. Primary emphasis was placed on research-based learning, the case-study method, the exploration of everyday biopolitical manifestations, and the application of an "Anthropological Lens" strategy.

The relevance of this study stems from the fact that, to date, the teaching of biopolitics in university curricula has lacked a systematic synthesis of anthropological knowledge and modern applied pedagogical methods. Our findings lead to the conclusion that applying an anthropological approach when teaching "Biopolitics" effectively stimulates students' analytical thinking and fosters practical skills. The data clearly demonstrate that embedding an anthropological toolkit into the instructional process significantly enhances student motivation and engagement with the subject matter.

Keywords: *Biopolitics, autoethnography, biopower, biopolitics of population, medical anthropology, visual anthropology, anthropologically-integrated model.*

Հոդվածը ստացվել է՝ 02.08.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 03.08.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 07.09.2026